

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Ավարտական փաստաթուղթ (ատեստատ կամ դիպլոմ՝ միջուկի հետ):
2. 4 լուսանկար (3x4 սմ չափսի):
3. Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական):
4. Զինվորական գրքույկ (առկայության դեպքում) (1-4-րդ էջերը) կամ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
5. 2021թ. հեռակա ընդունելության կարգի կանոնների 30-32-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքներ),
6. Միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները (առկայության դեպքում),
7. Տեղեկանք տվյալ տարվա ներբուհական ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ,
8. «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված միասնական քննությունների վկայագիր (Միասնական քննության դրական գնահատականը պահպանելու դեպքում):
9. Առկա ուսուցման համակարգում սովորող անձինք, հեռակա ուսուցման

ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացնել միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակը՝ այն բուհի նշագրումով և կնիքով, որտեղ գտնվում է բնօրինակը,

10. **Ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանք,** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվելու վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում):

11. **Վճարելու վերաբերյալ անդորրագիր:** Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Վճարումը պետք է կատարել ըստ ստորև ներկայացվող աղյուսակի: **Անկախ քննության արդյունքից վճարված գումարը չի վերադարձվում:**

Կազմակերպություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
Բանկ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հաշվեհամար (ՀՀ դրամ)	247610017094
Նպատակ	«Հեռակա ընդունելության քննության վճար» <u>ՊԱՐՏԱԴԻՐ ՆՇԵԼ ՆԱԵՎ</u> դիմորդի անուն, ազգանուն, հայրանունը

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.**

Վերոնշյալ տվյալների, ինչպես նաև դիմորդի անունի, ազգանունի կամ հայրանունի բացակայության դեպքում վճարման կտրոնը կհամարվի անվավեր:

## ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30. Սույն կետում նշված կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից.

1) 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան հաշմանդամները,

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

31. Ընդունելության քննությունը դրական միավորով հանձնելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները:

32. Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին մեկ տարվա ընթացքում զորացրված դիմորդները՝ քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս: